

«ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑԻ» ՍԿԶԲՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԿԱՆԴՆՄԱՆ ՓՈՐՁ*

Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ

[Բ] Յաղագս Ասիոյ Սարմատացոց¹

Իգ. Աշխարհ Ասիոյ Սարմատացոց² հասարակն է, որ բաժանի արևելեան Կասպի Ռիպեայ լեռամբ³ եւ Տանայիս գետով⁴ եւ Մեոտիս ծովակաւ⁵ մտիւքն լեռսինոս Պոնտոս⁶ ծով, եւ անտի նոյն ծովեղերքն յելս կոյս, մինչև ցմուտ Կուռաքսի գետոյ որ կոչի Ագոաւ⁷ եւ անտի առ Կաւկասին լերինսն՝ առ [Եգե-
րաւ], Վրաւք եւ Աղուսնիք, մինչև ցԿասբից ծովն⁸, ի մուտս Սուանաս գետոյ⁹ (Սուանաս գետ չլսի ուրեք)¹⁰:

Եւ ունի Սարմատիս¹¹ լերինս զՇանթայինն¹² եւ զՋիականն¹³, որ արձակէ գետս հինգ¹⁴ ի Միովիտ ծով. [եւ Կաւկաս լեառն ձգի] մինչև ցԿ[ո]ռաքս լեառն¹⁵, եւ Կաւկաս արձակէ գետս երկու՝ զՎարդանէս¹⁶, որ սկսանի հանդէպ Կաւկասայ¹⁷, եւ ձգէ զերկայնութիւն իւր ի մուտս կոյս զհիւսիսեալ, մինչև ի

* Սկիզբը տե՛ս ՊԲՀ, 1972, № 4 եւ 1973, № 1:

9 III B 1 Σαρματίας της εν Ἀσίᾳ θείας (V, 8).

2 Իգ. Սարմատացոց աշխարհն Ք. Քսան եւ երեքերորդ՝ Սարմատացոց աշխարհն Ա:

3 Ռիպիա Ք. Պոնտոսը հիշատակում է եվրոպական Սարմատիայում—Պլուտ (II, 5, 5):

4 Տոնալիս Ք. Τανάλις ποτ.

5 Միովտիս Ք. Μαίωτις λίμνη.

6 Πόντος Πόντος.

7 Կուռաքի Տ. Κορυαξος ποτ. (V, 8, 4): Իրանական-սկյութական լեզուներում, ինչպես, օրի-
նակ, պահլավերենում, նշանակում է kurrak, որից հայերեն «Քուռակ» (տե՛ս Հ. ր. Աճառյան,
Հայերեն արմատական բառարան, հատ. VI, էջ 1529): Այս անվան հունարեն թարգմանությունն
է նույն գետի այլ անունը Πόντος, այսինքն՝ «ձի, քուռակ» եւ նույնացվում է այժմ Կոզոր կոչ-
վող գետի հետ. Κορυαξος-ը հունական միջավայրում իմաստավորվել է իբրեւ Κορυαξος—«ազաւ»,
որտեղից էլ առաջ է եկել Աշխ. «Կուռաքսի գետ, որ կոչի Ագոաւ» «Կուռաքսը» իր հերթին առաջ
եկել առասպելական «Κολαξ»-ից, որ ցեղանվան անձնավորացում է նշված գետը Կորան
անունով հայտնի է միայն Պոնտոսի մոտ, որից եւ վերցրել է Աշխ.:

8 ... Κολχίδος καὶ Ἰβηρίας καὶ Ἀλβανίας ἀεχρε της Ὑρχανίας της καὶ Κασιπίας θαλάσσης
(V, 8, 3).

9 Σόαντα ποτ. (V, 8, 6).

10 Հետագա արտադրողի ընդմիջարկում պիտի լինի:

11 ՔԱ:

12 Κερσύνια (V, 8, 8).

13 Ἰππία (V, 8, 8), Гиппийские горы соответствуют Ергеням вместе со Став-
ропольской возвышенностью (М. И. Артамонов, История хазар, Л., 1962, էջ 172).

14 Պոնտոսը նշում է զեղ գետ. Μαρουζίου ποτ., Ὑρκανίου Μεγάλου ποτ., Θεσσαλίου
ποτ., Ὑρκανίου Μικροῦ ποτ., Ἀττικίου ποτ., Ψαθίου ποτ. (V, 8, 2).

15 Κορυαξος ὄρος (V, 8, 8). Տե՛ս ծան. 7: Նախնական ձևը պիտի լիներ Κορυαξος ὄρος եւ
պիտի ունենար «Ջիական լեռներ» իմաստը:

16 զՎարդանիս Տ. Οὐαρδάνης ποτ. (V, 8, 2), կոչվել է նաև Հիպանիս, իսկ հետագայում՝
Կուփիս եւ այժմ՝ Կուրան:

17 Καυκάσια (V, 8, 8).

եւ ընդ մէջ բուլղարաց²⁹ եւ ծովուն Պոնտոսի բնակեն աղգք Գաշք³⁰ եւ Քու[ր]թք³¹ եւ Ս[ո]ւանք³² մինչև ցՊիտիոնտ [քաղաք]³³ ծովեղերային Աւաղով աշխարհի³⁴, որ են Ափշիլք³⁵ եւ Ափխաղք³⁶, մինչև ցքաղաքն իւրեանց ծովեղերային Սևաստուպոլիք³⁷, եւ անդր եւս մինչև ցգետն, որ կոչի Դոա-

ի մուտս կոյս Վևան աղգ, և բնակեցաւ անդ» (ՊԲՀ, 1972, № 4 (59), էջ 225 և ծան. 11)։ Ձիական լեռը (ՉԻԱՆԿԱՆ) ըստ իս, նույն «Բուլղարաց լեռն» է և համապատասխանում է էրզն-նի և Ստավրոպոլի բարձունքներին։ Այս տեղերում էր գտնվում Ողիտոնտուր բուլկար կամ օնո-գուր ցեղի գլխավոր հորդան, որը գլխավորում էր Մեծ Բուլղարիայի թագավորությունը։ Վերջի-նիս հիմնադիրն էր Կուբրաթը (584—642) (Աշխ. «Նուբրաթ», «Նուբրադ»)։ Սրա որդին էր Ասպարուխը (Աշխ.՝ «Ասպարհրուկ որդին Նուբրաթայ»)։ 651 թ. առաջ է գալիս խաղիւրների թագավորությունը Կասպից ծովի հյուսիս-արևմտյան ափերին, անմիջապես հարևան Մեծ Բուլղարիային, որը ենթարկվեց խաղարների թագավորին՝ «խաբանին»։ Մի քանի տարուց հետո՝ 660 թ. մոտերքը, բուլղարների գլխավոր հորդան Կուբրաթի որդի Ասպարուխի գլխավորությամբ, հետապնդվելով խաղիւրների կողմից, քաշվեց դեպի Սև ծովի արևմտյան ափերը և ամրացավ Դա-նուրի գետաբերանի շրջանում, որտեղից այնուհետև անցնում է գետը և հաստատվում է նրա հարավային ափերին, հիմնադիր դառնում Բուլղարական թագավորության։ Այնուհետև ողիտո-նտուր բուլղարների բնակության տեղերում տեղանում են Կուբանի բուլղարներին կամ սև բուլղարներին»։ Սրանք ենթարկվում էին խաղիւրներին։ Բուլղարների մի մասն էլ քաշվեց դեպի Վոլգա գետի այն մասը, որտեղ այժմ բնակվում են ռուսները (տե՛ս Մ. Ի. Արтамонов, էջ 167, 172—173)։ Այս տեղեկությունը ափսոս լինի VII դարի վերջում կատարած ընդմիջար-կում։

29 Պուլղարաց S.

30 Գաշք S. Գաշք աղբյուրների երկրորդ հավաքական անունն է, որ կապվում է խեթական արձանագրությունների «Գաշկա», «Կաշկա» ցեղանվան հետ (մ. թ. ա. II հազարամյակում Փոքր Ասիայի Պոնտական լեռներում)։ Բյուզանդական աղբյուրներում հայտնի է Χασαγας ցեղ և Χασαγία անվանում մերձկուբանյան շրջանում։ Վրացական աղբյուրները գիտեն խաշաթի ձևով, իսկ ռուսական տարեգրությունները՝ КОСАГЫ, КОСОГЫ։ Այժմ էլ օսերը-ալանները աղբյուր-րին անվանում են «Քաշագ» (հունակի՝ «Քաշգար», Ի. Դ. Волкова, էջ 20)։

31 Քուրթք, վրաց. ჭოთაუღლი (պիտի առաջացած լինի «Քուրթաուր» ձևից), օվսական (ալանական) ցեղերից մեկը, որը այս անունով հայտնի է Աշխ. հետո XVIII դարին (Курта-тулы)։

32 Սուանք, Սվանք, Σουανς (V, 8, 13, տե՛ս և Strabo, XI, 2, 19) Suani վրաց. სუანნი, სვანნი, իսկ երկիրը՝ სუანეთი, სვანეთი։ Սվանները առանձին բարձրլեռական ժողո-վուրդ են, որի ինքնանունն է՝ «շվան»։

33 Ποντος (Strabo, XI, 2, 14), ծիփոնտ (Յ. Ս. 1, 339), ծիփոնտ (Յ. Ս. 1, 238), այժմ Պիցունդա։ Պիտիոնտ անունը առաջացել է ցայժմ այնտեղ պահպանված մնացուկային «կող-բիսյան անտառում» աճող սոճու փայտի անունից։

34 Ափխաղիայի անվան հնագույն ձևն է։

35 Ապշեղք — A, կա և Ափշեղք ձևը։ Absilae (Plin., NH, VI, 4, 14), Steph. Byz. 'Αψιλαι, վրաց. აფშილნი ցեղ և აფშილეთი երկիր։ խաշաթի [աղբյուրներից] և [աղբյուրներից] ցեղում (Յ. Ս. 1, 235)։ Ափշիլների հետ է առնչվում ափխաղների ինքնանունը՝ Апсны։

36 'Αψαγος, 'Αψαγος (Arr. PPE 15); აფხაზნი (Յ. Ս. 1, 43)։ Steph. Byz. ափխաղների փոխարեն գործածվում է Σαυαγας ցեղանունը։

37 Հին անունն է Διοσπορία (V, 9, 2), որը Օգոստոս կայսրը (մ. թ. ա. 27—14 մ. թ.) վերանվանեց Σεβαστοπολις։ ...ქუეყანასა აფხაზეთისასა და სევასტე ქალაქად..., რომელსა აწ ეწოდება ცხუმი (Յ. Ս. 1, 42)։ և մոვიდა სევასტოპოლედ, რომელსა აწ ცხუმად ეწოდების (Յ. Ս. 1, 43)։ վրաց. შიოლაქი, որի տառերն են արտասանությունն է այժմ գործածվող «Սուխուმი» անունը։

մատենանք⁴⁶, եւ աղգ մի այլ, որ են Կղարջք⁴⁷: Եւ ապա Որջլակերք⁴⁸, Սիրոս-

⁴⁶ Նախճամատեանք A... , παρα οε πη νοτιον 'Ιαταται εθνος — praeter australem laxamatae gens (V, 8, 10)։ Աշխ. վկայութիւնը նախճամատեանքի մասին թույլ է տալիս ուղղելու *Նաչաթաէ բնոց — *Naxamatae gens, ինչպէս և այդ երկրում գտնվող 'Εξαπολις — Exapolis (կամ Hexapolis) բազարի անունը (V, 8, 11) պետք է ուղղել *Նաչաթաէ — *Naxapolis, որը տնդագրվում է 'Իոնի Ռոստովի մոտերքը Աբսայսկայա ստանիցայի տեղում (հարկավ, չպետք է շփոթել XVIII դարում հիմնադրված նոր նասիջեանի հետ)։ Հմմտ. նախճաւան բազարի պտղոմեոսյան ձևը՝ Նաչաթա (V, 12, 5). Տե՛ս С. Т. Еремян, Расселение горских народов Кавказа по Птолемию и „Армянской географии“ VII в. „Международный конгресс антропологических и этнографических наук. Москва (3—10 августа 1964 г.)“, т. VIII, М., 1970. Նաև՝ Ս. Յ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 72)։ «Նոխճու» ալիմյան լեզենների ինքնանունն է (տե՛ս Н. Марр, Кавказские племенные названия и местные параллели, Петроград, 1922, էջ 21։ Ս. Յ. Երեմյան, Ն. Մառը և VII դարի «Աշխարհացոյց»-ը, ժողովածու «Մառը և հայագիտության հարցերը», Երևան, 1968, էջ 83—84)։ Վրացական մի փաստաթղթում, գրված 1310 թ.։ թվարկվում են Կովկասյան լեռնցիների կեղեցական թեմերը՝ «...սպարհոն խոնտա, Նանտա, տոջետիս, Նեգրեսիս, Լագուետիս, Զելթանիս...» (տե՛ս Գ. Կեպելիძე՝ ეტიუდები ძველი ქართული ლიტერატურის ისტორიიდან, II, თბილისი. 1945, էջ 314)։ Վերջերս հետազոտողները բացահայտում են ուրարտերենի և խուրիտերենի կապերը արևելակովկասյան, հատկապես վայնախյան (չեչենական և ինգուշական) լեզուների հետ (տե՛ս И. М. Дьяконов, Языки Древней Передней Азии, М., 1967, էջ 23։ Նույնի՝ Предыстория армянского народа, Е., 1968, էջ 18—20)։

Անտիկ հեղինակներին «Յաքսամատ», «Յաղամատ», «Յաղաբատ», «Իքսիբատ», «Իքսոմատ» ձևերով հայտնի նախճամատյանները համարվում են մերձադովյան «մեռտյան» կամ «սալիրոմատյան» ցեղ և տեղագրվում են Բոսսյորի թագավորության սահմաններից դուրս, Նյա և Սանիչ գետերի միջև ընկած տափաստաններում: Ըստ հունական ավանդությունների (Herod., IV, 110—117), սրանք առաջացել են ամազոնուհիների և սկյութ երիտասարդների միախառնումից, որ այլ տեղեկությունների համաձայն զարգարացիներն են և կասվում են նախճամատյան-չեչեններին մերձակա այժմյան ինգուշների հետ (տե՛ս К. Ф. Смирнов, Савроматы, М., 1964, էջ 188—197; Сб-с НА ВДИ, 1948, № 4, էջ 233):

47 Համապատասխանում են Պտղոմեոսի Վրշաշու-Psesii ցնդրն (V, 8, 12), որոնց հետքեր մնացել է Կուրանի վտակ Փշիշ գետի անվան մեջ։ Կղարջ և Փշիշ միեկնույն ցեղի տարրեր անունները պիտի լինեն։ Հավանաբար, շուրջ II դարում այս ափխազա-աղբղեական ցեղը գաղթել է և բնակություն հաստատել Ճորոխ գետի ստորին հոսանքի շրջանում, կազմելով երկու գավառ, որոնք այդ ցնդանուններով կոչվում են՝ Կղարջք— յլաօջջետի և Շաւշք թաշթետի (առաջացել է *փշաւք ձևից, ինչպես Փշաւք— Ծթաշի ինգուլները և չեչենները գիտեն «շուտ» ձևով)։ Նշանակալից է, որ Շավշեթ գավառը ընդգրկում է Շաւշուրի (այժմ՝ Իմերեթի) վտակի հովիտը, որ ցույց է տալիս, թե վրացական միջավայրում նրանք հայտնի էին նաև թաշթետն Շաւշուրնի անունով (հմատ. Ասողիկի «Մեսխութները» և Ստ. Օրբելյանի «Ջաւախութները»)։

48 Ձիք S: Որչլակերք PA: «Որչիլ» հնագույն ձևն է, որից առաջացել է այժմյան «որչիլ» բառը. տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. V, էջ 516: «Որչլակերք»-ը հանդիսանում է Ստրաբոնի (XI, 2, 15) Φθελάρχαροι անվան հայերեն ձևը և համապատասխանում են Հերոդոտոսի (IV, 109) գելոններին կամ բուդիններին և Պլինիոսի (NH, VI, 14) Saltu ցեղին: Անտիկ հեղինակները երբեմն վերջիններիս շփոթում են Թրակիայում ապրող Basaltu ցեղի հետ, որ ոչ մի կապ չպետք է ունենա նրանց հետ: Ինչպես այժմ պարզվում է, Հերոդոտոսը և ավելի ուշ շրջանի հեղինակները «Ֆտեյրոֆագոյ» մեկնաբանել են իրրև «սո՛ւու կոներով կերակրվողներ», սակայն սկսած Ստրաբոնից այն մեկնաբանվել է իրրև «որչլակերք» (տե՛ս Л. Е. Ельницкий, Знания древних о северных странах, М., 1961, էջ 72, 92—93): Արրիանոսի Պերիպլոսում «Ֆտեյրոֆագները» — գելոնները տեղադրվում են Պիտիոնտ քաղաքից հյուսիս, Ստենիտիկա գյուղի շրջակայքում, որը գտնվում էր այժմյան Գագայի մոտ: Տե՛ս ծան. 33:

կացիք⁴⁹, ապա Միթոիդատեն է գաւառն⁵⁰, եւ ապա յարեւելից կուսէ Շանթաւ յին լերանցն բնակեալ են Ամազոնք⁵¹, որք են կանայք պատերազմողք մինչև ցգետն, որ կոչի Ռա⁵², որ երկակի բղիւ է ի հիւսիսոյ Անծանօթ երկրի, եւ միանան, եւ հասեալ մերձ Ջիական լերանցն, արծակէ վտակ մի ի Տանայիս գետ⁵³, որ ի Միովիտ ծովակ իջան է. եւ այլն դառնայ յարեւելս կոյս մինչև հանդէս Շանթային լերանցն: Եւ ապա գան այլ երկու գետք յարեւելից կուսէ ի հիւսիսոյ, [ի] լեռնէն որ կոչի Ռիմիկա⁵⁴, եւ առնեն զնա [Ռա] եւաթնասնավտա-

49 Միտիկացիք P, Միսիկացիք A. Σιταχτιοι. Σιταχτιοι (V, 8, 12): Այս ցեղը, ըստ Ստրաբոնի (XI, 5, 2) ապրում էր Կուրան գետից արևելք, Ախերդեսոս կամ Մերմադալ (այժմ Եգորլիկ) գետի մոտերքը: Միրակաների մոտ դեռևս պահպանվում էին մայրիշխանության ուժեղ մնացուկներ, ուստի նրանք բնորոշվում էին իրրև «կանանցով կառավարվողներ»: Միրակաների մի մասը ժամանակին հաստատվել է Հայաստանում, Ախուրյան գետի հովտում և նրանց անունով է կոչվել Շիրակ գավառը:

50 Միդոսդեսն գաւառն S, Միթոկացիք PA: Μιδωδατος χωρα (V, 8, 13): Անշուշտ, կապված է Միհրդատ Զ եվպատորի (111—63) անվան հետ և տեղադրվում է այժմյան Անա-սայի-Քասանի տարածքում, որը գտնվում էր Բոսպորի թագավորության սահմաններում:

51 Ամազոնք S: 'Αμαζόνες (V, 8, 13), ու 'Αμαζόνες (Strabo, XIII, 3, 21): Անունը առաջ է եկել արամեական amn azzon դարձվածքից՝ «հզոր, մեծ մայր», որ ասորական մայր աստվածուհու անունն էր: Ամազոնները պիտի լինեն նույն զարգարացիները, որոնց մոտ դեռ գոյություն ունեն խմբային ամուսնության ձևը (Մ. A. Ельницкий, էջ 34): Ստրաբոնը (XI, 5, 1) ամազոնուհիներին և զարգարացիներին միասին է պատկերացնում և նրանց բնակության տեղը ցույց է տալիս Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսային փեշերի լեռնաբազուկներին, որոնք անտիկ հեղինակներն անվանում էին Կերավնյան (Շանթային), և առասպելական Թերմոդոն գետի անունը նույնացնում է ալանական «դոն» (նշանակում է «գետ») վերջավորություն ունեցող գետի հետ (տե՛ս E. И. Крупнов, Древняя история Северного Кавказа, М., 1960, էջ 70): Գարգարների-զարգարացիների ցեղանունը առնվում է այժմյան ինգուշների հետ, որոնց օսերը (հին ալանները) կոչում են՝ маехъаелон (A. И. Генко, Из культурного прошлого ингушей, «Записки Коллегии Востокведов», V, М., 1930, էջ 707: Տե՛ս նաև H. Г. Волкова, էջ 151): Եւ այլ աղբյուրներից հայտնի «մախելոն» ցեղանունն է, որի հետ կապվում է Արմիի գետի օսական անունը՝ Маехъаел-дон, ուսու. Макал-дон և բառացի նշանակում է՝ «ինգուշների գետ» (A. И. Генко, ն. տ.): Քաաբա-ի-Ջարդուշտ եռալեզվանի արձանագրության մեջ հունական տեքստում հիշատակվում է Μελιτονια անվանը, որը տեղադրվում է Կուր և Արաքս գետերի միախառնման տարածքում, որտեղ գտնվում էր «Գարգարացուց դաշտը», Գարգար գետը և «Գարգարացուց իշխանությունը» (Մ. Խոբ. Բ, Ը): Ահա այստեղ է գալիս Մեսրոպ Մաշտոցը (361—440), որը «ի թագաւորական տեղիսն տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին, և զնոցին թագաւոր որում Արսվաղ էր անուն, ամենայն աղատօք հանդերձ» (Կորիւն, Վարք Մաշտոցի, Ժէ) և հորինեց «զնշանագիրս կոկորդախօս աղխազօր խժական խեցբեկագունին այնորիկ զարգարացուց լեւուին» (Մ. Խոբ. Բ, ծղ): 387 թ. Մեծ Հայքի բաժանումից հետո ժամանակավորապես Աղվանից թագավորության կենտրոն էր Գարգարացվոց դաշտում գտնվող Փայտակարան քաղաքը (տե՛ս С. Т. Еремьян, Страна «Махелония» надписи Кааба-и-Зардушт, ВДИ, 1967, № 4, էջ 47—58): Այժմ իրավացիորեն այս զարգարացիները կապվում են Հյուսիսային Կովկասի զարգարացիների-մախելոնների (ինգուշների) հետ (H. Г. Волкова, էջ 154):

52 Իսա S: Τον Κερσανίον ὀρέων καὶ τοῦ 'Ρα ποταμοῦ (V, 8, 13): Այսպես էր կոչվում Վուրդա գետը--ավետ. Raha, 'Αραξής (Herod. IV, 11): Հունարեն 'Ρα առաջ է եկել սկյուրթական Raha (J. Marquart, Wehrot und Arang. Leiden, 1938, էջ 136): Հայաստանում եւ Երասխ--Արաքս գետը կոչվել է նաև Ռա (Կորիւն, Վարք Մաշտոցի, [Բ]):

53 Գետոյ S:

54 Τη 'Ροδαχία ὄρη (VI, 14, 4, 10, 11): Նույնն է Րոճաճ գետի հետ, որ այժմյան Մեծ կամ Փոքր Ուզն գետն է Վուրդայի գետաբերանից գեպի հյուսիս-արևելք (տե՛ս ВДИ, 1947, № 1, էջ 294, ծան. 4):

կեան⁵⁵, զոր կոչեն թուրք Աթլ գետ⁵⁶, որոյ մէջն է կղզի, յոր մտեալ ամրանայ Բասւաց աղզն⁵⁷ ի հղօր աղզէն խաղրաց⁵⁸ եւ Բ[ն]ւխայ⁵⁹, ճարակելոց յելից եւ ի մտից, եկելոց անդ ի ձմերոց, և կոչեն Սեաւ կղզի. զի յաղագս բաղմութեանն աղզին Բասւաց՝ մարդոյ եւ անասնոյ անդ մտելոցն՝ սեւ երեւի, զոր Պտղոմէոս⁶⁰ [նի]գռաւ կղզի⁶¹ կոչէ:

Եւ վտակքն Աթլ գետոյ անցնալ [ընդ] կղզին դարձեալ միանան և մտանեն ի Կասբից ծովն, բաժանելով ընդ Սարմատիա եւ ընդ Սկիւթիոյ աշխարհն:

Որոյ (Կասպից ծովի) ըստ մտից կուսէ ասէ Պտղոմէոս, [գետք]՝ զԱ[ւ]դոն⁶² եւ զԱղանդոն⁶³ եւ զՍոնդաս⁶⁴ եւ Գեոուա⁶⁵ եւ ազգ[ւ]ս Տոմանուն գետաւոր[ք] ի Կաւկասայ հոսի[ն] ի ծով, մինչև ցԱղուանից սահմանն⁶⁶:

⁵⁵ և դեթանասնավտականն էթիլ P:

⁵⁶ Աթլ Ա: Այժմ էլ այսպես են կոչում Վոլգա գետը չովաշները:

⁵⁷ Թերևս պիտի լինեն՝ «Բա[ր]սւաց աղզն»: Բարսիլներ—բերսուլա բուլղարական ցեղերից մեկն էր և մոտ էր խաղիրներին ու հոներին (M. H. Артамонов, էջ 131—132, 235):

⁵⁸ VII դարում խաղիրների հղօր ցեղային միությունը ընդգրկում էր գրեթե ամբողջ Հյուսիսային Կովկասը և Դաղստանի դաշտային մասը:

⁵⁹ Բուշխ կամ բուսկ են կոչվել այժմյան բաշկիրները, արաբական հեղինակների բաշխուրդները (M. H. Артамонов, էջ 234—235):

⁶⁰ Պտղոմէոս S:

⁶¹ Հնում այժմյան Կալաչից դեպի հարավ Վոլգա գետի բազուկներից մեկը նշուղավորվում էր, որի հետքերն են ներկայացնում այժմյան Սարսի լճակների շարքը և աղակալված գետի լուներ, որը շարունակվում է մինչև Մանիչ և Կուսայի գետաբերանից հյուսիս գտնվող տարածքը: Սարսի գետահունի և Վոլգայի միջև ձգվող աղուտների տափաստանը այժմ էլ կոչվում է «Աւ հողեր» (Чёрные земли): Պտղոմէոսը (V, 6, 12) չրով եզերված այս տարածությունը դիտում է իբրև «կղզու երկիր»— Νησιώτης γῶραι-Nesiotis terra, իսկ Աշխ. [նի]գռաւ առաջացել է լատ. nigro բառից և բացատրում է, որ այն «կոչեն Սեաւ կղզի. զի յաղագս բաղմութեանն աղզին Բասւաց՝ մարդոյ եւ անասնոյ անդ մտելոցն սեւ երեւի» (տե՛ս С. А. Ковалевский, Карта Птолемея в свете исторической географии Прикаспия. «Известия Всесоюзного географического общества», том 85, 1953, вып. 1, էջ 31—48: Տե՛ս նաև С. Т. Еремян, Расселение... էջ 401—402): Թեոփիլակոս Սիմակատտան գիտե թիլ գետը, որ նույն Աթլն է (M. H. Артамонов, էջ 76): Երա ասելով թուրքերը այն կոչում են Սե գետ (Simocatta. VII, 7, 13): Նույն այս աղբյուրը հիշատակում է այս տեղերում ապրող մարդկանց, որոնք սևազգեստ են (VII, 9, 4): Սրանք Սե կղզու բնակիչները պիտի լինեն, որոնք Պտղոմէոսի մոտ հայտնի են Μελαγχλαῖται (V, 8, 13) ձևով, որ բառացի նշանակում է «սևազիխարկներ»:

⁶² Οὐδωνας ποταμός. (V, 8, 6)—պիտի լինի այժմյան Կուսա գետը:

⁶³ Ἀλόντας ποταμός. (V, 8, 6)—այսպես էր կոչվում Թերեք գետի ներքին հոսանքը, իսկ վերին հոսանքը կոչվում է Диодорис (Plin., NH, VI, 30; Генко, էջ 706): Վրացիները Թերեքը կոչում էին ლომაკვი:

⁶⁴ Ἰσονοαί. (V, 8, 13), պիտի լինեն՝ Ἰσονοαί — առաջ է եկել Սունտա ցեղանունից, որ դիդոյցիներն են նրանց հարևան անդիադիների մոտ (տե՛ս Н. Марр, Кавказские племенные названия и местные параллели. էջ 53). ուստի... Սոնդաս—Սունտա պիտի կոչվեր այժմյան Ավարական Կոյսու գետը (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ Աշխ., էջ 81):

⁶⁵ Γερροι. (V, 8, 13):

⁶⁶ Եկատի ունի՝ Οὐδωναι καὶ Ἀλόνται καὶ Ἰσονοαί, καὶ Γερροι (V, 8, 13) ցեղերը: Οὐδωναι և Ἀλόνται պիտի լինեն՝ Tab. Peut. Otio Scythae և Paralocae Scythae կամ Παρλαταῖ Σκυθῶται (Herod. IV, 6): Սրանց ինքնանունը եղել է «սկոլոտ» և պիտի լինեն նույն «թաւամարական սկյութներ»։ Ἀλόνται նույն Ἀλόνται-ն պիտի լինի, որ «ալան» ցեղանվան տարբերակն է: Γερροι = Դեոուա, որ ըստ Աշխ. հիշատակված գետերի բոլորից հարավ էր ընկնում՝ «ցԱղուանից սահմանն»: Այս ցուցմունքը և որոշում է նշված գետի տեղագրությունը եվրոպական արևելյան սահմանների շրջանում, որ ընկնում է այժմյան Ադ-սու գետի մոտերքը: Γερροι-ի տեղական անունը պիտի լինեն [ծ]գեոուա և համապատասխանում է այժմյան Գիր-

Եւ Լն ի Սարմատիոյ համարեալ, այսպէս, սկսեալ ի մտից յևյս կոյս. Լախ ազգ Ալանաց⁶⁷ Աշ-Դիգոր⁶⁸ ևւ ըստ հարաւոյ՝ համարեալ նոցա Խերուրք⁶⁹ ևւ Քուրէտք⁷⁰, ևւ Արգուէլ որ է Մարգոսէլ⁷¹, ևւ Սկիւմիք⁷² [որ Լն] Թակոյր⁷³ ևւ Ալանք⁷⁴ Լն յետ Դիգորին⁷⁵, յԱրգոզ աշխարհին⁷⁶, Կաւկասին լեռանցն. ուստի հոսի գետն Արմնայ⁷⁷, ևւ զնալով ընդ հիւսիսի՝ ընդ դաշտս անբաւս, խառնի յԱթլ:

Եւ ի նոյն լեռինն՝ յետ Արգոզեան ազգին⁷⁸ բնակեն՝ Ռաճանք⁷⁹, Փինձք⁸⁰,

գիման-չայի գետին (С. Т. Еремян, Страна «Махелония» էջ 56—57): Մ. Կաղան-կատուացին գիտի «Հեջերի գաւառ» (առաջացել է «Հեզերի» ձևից), որի հիշատակը պահպանվել է այժմյան ուլարի տեղանվան մեջ:

67 Աղուանաց S:

68 Աշտիգոր S: Ազգ ալանաց Աշ-Դիգոր նշանակում է ալանական ցեղերից մեկի՝ Դիգորների այն մասը, որը իրեն «Աշ» այսինքն «օվս» էր կոչում: Աշ մասնիկը կապ պիտի ունենա *Ašaxi (V, 5, 10) հետ, ինչպես և վրացական լոցն—տնո հետ:

69 Խերարք P: Այս ցեղը տեղադրվում է Ավարական Կոյսու գետի վերին հոսանքի շրջանում, Ջուրմուլ վտակի ձորում:

70 Քուրէտք P, Քուրէտք A: Վրաց. კურეთი — Ռոն գետի ակունքների շրջանում: Ալան-օվս ժողովուրդը կազմող ցեղերից մեկը:

71 Արգուէտք P, Մարգուր P, Մարգույր A. ճոցցցցո, ճոցցցցո արգուէթ գաւառ, կոչվում էր նաև Ճոցցցո Մարգուիսի: Աշխ. պահպանվել են քարվելական ցեղերից մեկի անվան հիշտ ձևերը—Արգուէլ կամ Մարգուէլ: Այս ազգագաւառը գտնվում էր Ղվիրիլա գետի և Արգվեթի կամ իխի (Սուրամի) լեռնաշղթայի միջև և իբրև առանձին գավառ մտնում էր Վիրքի (Վրաց աշխարհի) կազմում:

72 P. Սկիւմիք A, Σκυμνία (V, 8, 13) և Σκυμνία (Procop. B. G. 4, 2) տեղադրությունը որոշվում է ընդհանուր Աշխ. պարզաբանման՝ «Սկիւմիք [որ Լն] Թակոյր» և համապատասխանում է Վրաց. თავჯუბო Ռակուէրի գաւառին, որը հայտնի էր նաև լոցինցցո և լեչիսումի անվամբ: Վերջինս սվաներեն ձևավորմամբ («Լե-Չիումի») նույն Սկիւմիքն (=Չիումի) է. որ այդ անվան հունական տառադարձությունն է: Սկիւմիքը ստորև հիշատակվող «Յիւմիք» ցեղանունն է և արտացոլվել է նաև Սացիումէթ գավառի անվան մեջ (տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ Աշխ., էջ 81):

73 Թակոցիկք P, Թակոյիք A

74 Նկատի ունի ալանական հիմնական ցեղը, որը կրում էր «ալան» անունը և բնակվում էր Դիգորից հետո գտնվող Արգոզ աշխարհում, ուստի Աշխ. ունի «Արգոզք»:

75 Դիգոր S: Դիգոր է կոչում իրեն օսերի արևմտյան խումբը, որոնց հարևան սվանները անվանում են «սավիար», համապատասխանում է Պտղոմեոսի Σαυαρος (III, 5, 10) ցեղանվանը:

76 Արգոզ աշխարհը «Արգոզեան ազգի»—ալան ժողովրդի (Աշ-Դիգորի ալանների) կենտրոնական գավառն էր (այժմ էլ Оердюз օսերեն նշանակում է «անտառապատ դաշտ») և տեղադրվում է Օսեթիայի հարթավայրում, լեռնային Դիգորիային հարևան (Н. Г. Волкова, էջ 110—111):

77 Այժմ այս անունը պահպանվել է Արմիսի վտակի անվան մեջ: Աղադոն անունը պիտի կրվի Թերեթի վերին հոսանքը:

78 «Արգոզեան ազգ»—ալան-օվսերի հիմնական մասն էր, որը իրեն կոչում է «Իրոն»: «Արգոզեան ազգը» հիշեցնում է Մ. Խոր. (Բ, Ժ) հաղորդումը ալանաց գերիների մասին, որոնց Արտաշեսը իբր թե բնակեցրել է Շաւարշական գավառում, որը այնուհետև կոչվել է Արտադ-Փանդի և աշխարհն ուստի գերեցան՝ Արգոզ (արտադրողները սովորաբար տալիս են Արտադ ձևով) կոչի մինչև ցայսօր ժամանակի: Այս տեղեկությունը թերևս վերաբերում է Արտազին հարևան Աղանդ-ոտո գավառին (այժմ Ալյանդ-ոտո մահալ. Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ Աշխ., էջ 32):

79 Դաջանք S, Դաճանք P, Գաճանք A: Վրաց. ღაჯან Բաճա, որից Աշխ. Բաճանք, վրացերենում պետք է լինե՞ր ღაჯანდო Բաճանի—տեղադրվում է Ռիոն գետի վերին հոսանքում:

80 P, A: Թերևս պիտի կարդալ «Փի[սի]նձք», այս դեպքում այս ցեղանունը պահպանվել է «Քիդինգի» տեղանվան մեջ:

Դուռը⁸¹, [Հոնք]⁸², Յիսոյմ⁸³, Ասուրք⁸⁴, Ծանարք⁸⁵, յորում Ալանաց դուռն⁸⁶,
և միւս [ևս] դուռն որ ասի Մելրան⁸⁷, հոմանունն ազգի⁸⁸, և ասյա Թուշք⁸⁹,

81 Դուռը Ա. Օսթրալ (V, 8, 13) կա և Նոսթրալ՝ նիշտ ձերս Դուռը—գլխերը, օվս-
ալանական ցեղերից են և նրանց անունով—ճշմունի Դվալնի, վրացիները կոչում են
ճշմունի Դվալնի Արդոն գետի ակունքների շրջանը։ Օսերը կոչում են «Տուալթա»
Հարավային Օսեթիան օսերը անվանում են Ուրս-Տուալթա, իսկ վրացիներն ու՝ Յալոն
ճշմունի Մաղրան Դվալնի ունի նույն նշանակությունը։ Իրենք գլխերը—թուալ-
նիսը Հարավային Օսեթիայի և Թրուսոյի կիրճի օսերին համարում են կուդարնե (տե՛ս
ժան. 70, Н. В. Волкова, էջ 112—119)։

82 Р, խոնք Ա։ Հետադուռները պարզել են, որ տվյալ դեպքում այս հոնեը—խոնե-
րը կապ չունեն թուրքական ցեղ հոնեի հետ։ Ժամանակին կլարոտը նշել է, որ թուշերը
Մեծ Արդոն գետը անվանել են «խոնա»։ Այս հոնեը պիտի պատկանեն վայնախյան ցե-
ղախմբին և ձուլվել են այժմյան ինգուշների մեջ։

83 Մըխոյք Տ։ Այս ցեղանունը պահպանվել է վրաց աշխարհի «Սացիումէթ» գավառի
անվան մեջ, ինչպես և Շքեմի Յիսուանի սվանական Լե-Չիսուանի անվան մեջ և հուն.
Σαυρομαχία է (տե՛ս ժան. 72)։

84 Ափուր, Ոսփուրք Р, Ափուրք А, Փուրքայ Տ։ Ճիշտ ընթերցումը պիտի լինի «Ասուրք»
—ըստ երևույթին, ալան-օվս ցեղերից մեկը, որ անմիջապես սահմանակից է Վերին աշխարհ
վրաց երկրին, և սրա անունով վրացիները բոլոր ալանաց ցեղերին կոչում են օվս (հին վրա-
ցիներն ու՝ կամ օս (նոր վրացիներն ու՝ Ասուրք ազգազաւոր համապատասխանում է վրաց.
Մաղրան-Դվալնի գավառին՝ Լիախվի գետի ակունքների շրջանում (Ս. Տ. Երեմյան, Հա-
յաստանը ըստ Աշխ., էջ 42)։

85 Ծանուրքայ Տ, Ծանաւրք А։ Σαυρομαχία (V, 8, 13), վրաց. Մանարնի —
բնակվում էին Թերեր գետի ակունքների շրջանում (այժմ. Ղազբեգի շրջան), որը նրանց անու-
նով վրաց գրականության մեջ հայտնի է ինչպես Մանարեթիսա ձևով, Սանարեթիսա ձևով,
այժմ՝ խեվի, իսկ այնտեղ բնակվող վրացիները՝ «մոխեվե»։ Համաձայն կլարոտի,
օսերը մոխեվցիներին կոչում էին «Մոնա», իսկ ամբողջ տարածքը Դարյալի անցքից մինչև
Կորի՝ «Մոնա» կամ «Սենա» (J. Klaproth, Reise in den Kaukasus und nach Geor-
gien unternommen in den Jahren 1807 und 1808, Bd. I, Halle und Berlin, 1812,
էջ 676), իսկ Ղազբեգի գագաթը օսերը անվանում էին Соена (Н. Г. Волкова, էջ 126—
127)։ Ըստ Ղ. Ֆ. Մինորսկու «Ծանար» ցեղանունը վայնախյան ծագում ունի (В. Ф. Минор-
ский, История Ширвана и Дербенда X—XI веков, 1963, էջ 210—211, ժան. 100)։

86 Պարսկ. Դար-ի-Ալան, վրաց. Ճաճոալանի Դարիալանի։ Այսպես էր կոչվում
այժմյան Դարյալի անցքը, որտեղով անցնում է ռադմավիրական ճանապարհը։ Հայ մատենա-
գիրները այս անցքը կոչում են «Դուռն Ալանաց», երբեմն նաև «Դուռն Աղուանից»։

87 Քծեքեն Տ, Մերան դուռն Р, Միծեն դուռն А։ Այսպես էր կոչվում Փասանաուրի գյուղից
վերև գտնվող անցքը, ռադմավիրական ճանապարհի վրա, որտեղ միախառնվում են Սպիտակ
Արագվին և Սև (կամ Դուդամակարի) Արագվին, կաղմելով Արագվի գետը։ Ալանաց դուռն և
Մերան դուռն համապատասխանում են Պտղոմեոսի (V, 3, 5, Σαρματική πύλη-Sarmaticae
Portae (51°—48°30') և Ἀλβανική Πύλη-Albaniae Portae (50°—47°) անցքերին։ Այս
անցքերից հյուսիս, ըստ երևույթին, այժմյան Թաթարտուփի միջնաբերդի տեղում, պիտի գտնվեր
Պաղոմեոսի (V, 8, 9) կողմից հիշատակվող Աղեքսանդրի կոթողը՝ Ἀλεξάνδρου Στήλη—Ale-
xandri Columnae (50°—51°30')։

88 Մելրանք «հոմանուն ազգը» վրաց. Մալկանելնի բնակվում էր Արագվի
գետի վերին հոսանքում, որը կոչվում էր Սպիտակ Արագվի։ Այս ցեղանվան հետ պիտի կապ
ունենա Դուշնի շրջանում գտնվող Միլկանի գյուղի անունը։

89 Դուձք, Թուձք Տ, Թուձք А։ Τυζα (V, 8, 13), որ պիտի առաջացած լինի հայերեն
«Թուշք»-ից։ Վրաց. տալան Թուշնի և երկիրը՝ տալան Թուշէթի՝ Ալադան և
Իորի գետերի ակունքների շրջանում։ Պիրիբիթիլի Ալադանի կիրճում են բնակված թուշերին
ցեղակից բացրիները կամ ծովա-թուշերը, որոնք դեռ մոտ են վայնախներին։ Բացբիները իրենց
անվանում են «բացալ»։ Դիդոյները սրանց գիտեն «ծովալ» անունով (Н. Г. Волко-
ва, էջ 161)։

եւ խունձը⁹⁰, եւ Քուստը մարդակերք⁹¹, ապա Յիսաւատը⁹², ապա Գուդամա-
կարք⁹³, ապա Դուրծ[ու]կը⁹⁴, ապա Դիդոյք⁹⁵, ապա Լեկը⁹⁶, ապա Կատա-

⁹⁰ խունձը S.A. խուշը P, ճիշտ ընթերցումը պիտի լինի խ ու ն ձ ք ու ն ձ (վրաց.
ხუნძი — աշուսեն — աշուսեն — աշուսեն — աշուսեն — աշուսեն — աշուսեն — աշուսեն —
էլ խ ու ն ձ ա խ անունով հայտնի շրջանում, Ավարական Կոյսու գետի կիրճում: խ ու ն ձ ա խ
ազգագրական և նրա կենտրոնի անվանումը իր ղուգահեռն է դրնում Արցախ (Արծախ,
Արծախ) անվան մեջ, իսկ Աղահեճը դավառում դրնումը խանածախ գյուղի անվան նմանություն-
նը խունձախի հետ ապացուցում է ասածը: Դաշտանում բնակվող կարատցիները խունձ—
ավարներին կոչում են hal-bl, իսկ վերջինս առաջ է al-ban || aiwan չթարգմանալի տեր-
մինին (տե՛ս Ս. Ս. Երեմյան, Ն. Մառը և VII դ. հայոց Աշխ., էջ 80—81):

⁹¹ Խիստը մարդակերք S, Քուստը, Մարդակերք P, Քիսը, Մարդակերք, պիտի լինի՝
Քիստը (Կամ Քուստը) մարդակերք: Վայնախների երրորդ ցեղը մահիստունցի-
ները «մայստվեյ-մայսդվեյ» է իրեն կոչում, իսկ հարևան Կախեթի վրացիները նրանց
անվանում են լոնժո (Քիստի լոնժո Զիստնի, այսինքն Քիստը): Ծովա-թուրքերը
կամ բացբիները ինգուլներին դիտեն «Քիս-տի-յ» (եղակի՝ qisti-w), որ նշանակում է «ին-
գուլ»: Անշուշտ, վրացական միջավայրից է անցել Աշխ. հիշատակվող Քիստը-Քուստը
տերմինը, որ առկա է «Քուստը մարդակերք» ածականով: Վերջինս հնարավորություն
է տալիս տեղագրել Պտղոմեոսի մոտ հիշատակվող Μαροχαι Ξηρος (V, 6, 10) կամ Αρδοχαι
(III, 5, 10) ցեղը: Տոմաշևիցը այս հորոշողումը բացատրում է իբրև «հում միս ուտողներ»
(RE, I, 1711) և համարում է Հերոդոտի մոտ (IV, 18) հիշատակվող «անդրոֆագների» (մար-
դակերների) հետ: Հին հույների մոտ սույն ածականը անշուշտ առաջացել է անվան ստուգա-
բանության հիման վրա, իսկ Աշխ. հեղինակը իմանալով ամադոկների նույնության մասին
բիստերի հետ, վերջիններիս կոչում է «Քուստը մարդակերք»: Այժմ «միցջեկի» անու-
նով են հայտնի շեչենները, ինգուլները և բիստերը կոմիկների մոտ: Ըստ իս՝ «միցջեկ»
ցեղանունը հունական տառադարձությամբ Μαροχαι (*m[ɪ]z]aekoí ձևով, հայտնի է եղել դեռևս
Պտղոմեոսին իբրև նախճո-շեչենների ընդհանրացնող անուն: Բիստերի էթնիկական անվան հետ
պետք է կապ ունենա Հայաստանի Արցախ նահանգի Քուստի (արաբ. Քուստասջի) գավառի
(այժմ Տավուշ-Շամշադիի շրջան) անունը (տե՛ս Ս. Ս. Երեմյան, Ն. Մառը և VII դարի
Հայոց «Աշխարհացոյց»-ը, էջ 84—85): Քիստերը այժմ էլ բնակվում են Արմիի գետի կիրճում

⁹² Զղաւատը S: Վրաց. ცხავატო Զիւաւատնի ցեղը, որը ապրում էր Արագվի գետի
վտակ՝ Սպիտակ Արագվիի ակունքների շրջանում:

⁹³ Վրաց. ჯუჯაბატონი յույաւատնի, բնակվում էին Գուդամակարիս Արագվի
վտակի կիրճում:

⁹⁴ Դուրծկը S, Դուրճիկը P, Դուրցուկը A, ճիշտ ընթերցումն է՝ Դուրճուկը, վրաց.
დურძუკი Դուրճուկնի և ազգագրական՝ დურძუკეთი Դուրճուկէթի: Սրանք այ-
ժմյան ինգուլների նախորդներն են և բնակվում էին Ասսա գետի վերին հոսանքում:

⁹⁵ Դիդոյ S, Դիդոյք P: Διδωξ (V, 8, 13). վրաց. დიდო Դիդոնի և երկիրը ընդհանուր
«Դիդոլթի» Այժմ էլ նույն տեղում՝ Անդիական-կոյսու գետի ակունքների շրջանում գոյություն
ունի դիդոլթիների ժողովուրդը: Դիդոյները իրենք իրենց կոչում են jadu, իսկ երկիրը՝ Յեդի
(II. М а р р, Кавказские племенные названия и местные параллели, էջ 33): Ավարները,
այսինքն՝ խունձերը, դիդոլթիներին անվանում են «Սունտա», որ վկայված է Պտղոմեոսի
մոտ Διδωξ (V, 3, 13) իբրև գետի (Ավարական-կոյսու) անուն և ցեղանուն (Աշխ. «Սուն-
դաս», տե՛ս ծան. 64): Բացբիները դիդոլթիներին կոչում են «դիդո», իսկ անդիացիները՝
«ծունտագիրալ»:

⁹⁶ Դեկը P.A. Λεξ (Strabo, XI, 5, 1), վրաց. ლევი Լեկնի, այժմյան Լեկիները

պաստիանք⁹⁷, ապա Աղուտականք⁹⁸, ապա հենաւ[ի]ք⁹⁹, ապա Շիղբք, որ է Ճիղբք¹⁰⁰, ապա [Լ]փնիք¹⁰¹, [հեղայք¹⁰², Կասբք¹⁰³],

Սւ ապա Կաւկաս բաժանի յերկուս բաղուկս, մինն գնայ դէպ ուղիղս կոյս,

կամ «լ աղ դ ի ք», «լ աղ ք», ինչպես և լ ա ք երբ Հարավային Դաղստանում: «Լ ե դ զ ի», «Լ աղ դ ի», «Լ աղ ք» ցեղանվան հիմքում ընկած է՝ les-k || *leh-k > lek (-leg, հատկապես ԽԵՄ — Աղլէք), las-k || lakk → lazg || lag — այս բոլորը նշանակում է զ աղ դ ի ու մ ու խ, լ ա ք, բառացի՝ նույն լ ե դ զ ի ն: Բացի ինքը (ծովա-թուշերը) լեզգիներին կոչում են lek (հոգնակի leki): Բացի այդ մասնավոր նշանակությամբ այս տերմինը բացիների մոտ ունի նաև ընդհանուր նշանակություն և վերաբերում է Դաղստանի ու Զաքաթալայի շրջանի բոլոր էթնիկական խմբերին (նույնիսկ ինդիլոյիներին, որ մասնագրականացած վրացիներ են), բացի ադրբեջանցիներից: Այդ նույն ընդհանուր նշանակությամբ է լ ե կ ք, դ ե կ ք: ՄԵՅԾ — լեկնի տերմինը գործածվում միջնադարյան հայկական և վրացական աղբյուրներում (տե՛ս Н. Марр, Кавказские племенные названия..., էջ 22: Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ Աշխ., էջ 87—88, նաև Страна „Махелония“..., էջ 49):

⁹⁷ Տապուտարանք S, Տապաստաւանք A: Դժվար է ճիշտ ընթերցումը գտնել, հաղիվ թե այն լինի Տապասարանք, Թաբասարանք, որովհետև նրա հայ մատենագիրների կողմից վկայված հայերեն ձևը՝ Թ ա ս ա ս պ ա ր ք նշված է ստորև: Թերևս ավելի ճիշտ է Կատապաստիանք ձևը:

⁹⁸ Յաղուտականք S: Ըստ երևույթին Սամուր գետի վերին հոսանքում, նրա վտակ Ախտիշայի կիրճում բնակվող ախտի ժողովրդի (АХТИШЦЫ) հնագույն հիշատակությունն է:

⁹⁹ Խենաւք S, Խենուկք P, Խենուկք A: Χεννίδες (Υ, օ. 10): Խ ե ն աւ դ ք պիտի կոչվեն այժմյան Ախտիշայ վտակի կիրճում՝ Խ ն ո վ ա ու լ ու մ ապրող բնակիչները, որոնք կազմում էին առանձին ցեղ: Հնում, ըստ երևույթին, սրանք ավելի մեծ տարածք են գրավել: Ն. Մառը, հետազոտելով դիդոյական Հինուխ գյուղանունը, վերջինիս նախատիպը փնտրում է՝ Πεντζε ցեղանվան մեջ, որոնց հիշատակությունը պահպանել է Տակիտոսը (Annales, II, 68): Այս անունը առաջ է եկել հին հունական առասպելաբանության հիմքի վրա տեղական ցեղանվան ստուգաբանության հետեւնքով և առնչվում է Խ ե ն աւ դ ք անվան հետ (Н. Марр, Кавказские плем. назв., էջ 22: Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ Աշխ., էջ 87):

¹⁰⁰ Շիպք, Շիղպք, ապա Ճիղբք S, Շիղեայք, Ճիղայք P, Շիպղք, Ճիղաք A: Silbu (Plin., NH, VI, 29), ըստ երևույթին, նույն ցեղանվան աղճատված ձևն է Պտղոմեոսի Տեթրե (Υ, 8, 13): Շիղբք կարող է առնչվել Գաղմա-Կախեթում գտնվող Շիլդա գյուղի անվան հետ, սակայն Ճիղբքի բնակության վայրը տեղագրվում է Պիրիբիթելի Ալաղանի խորածորում:

¹⁰¹ Փիք S, լիք PA: Լ փ ն ի ք ք, ավելի ճիշտ՝ Լ փ ի ն ք ք, համապատասխանում է Պլինիոսի (VI, 29) Lupeniorum, Tab. Feut. Lupones, patria Lepon—Anonymi Ravennatis. Պտղոմեոսը հիշատակում է միայն Λεβνίον աղաղ վայրը (Υ, 10, 2), որը պիտի Մ. Կասեանկ. (Բ. ԼԹ) չփնաց բաղաբը լինի և տեղագրվում է այժմյան Մաթաբեդո Լ ա փ ա ն ե ք ի գյուղի տեղում, Լոպոտա վտակի գետաբերանում: Ըստ իս՝ Լ փ ի ն ք աղագագաւոր տեղագրվում է Գաղմա-Կախեթի տարածքում՝ Ալաղան կամ Աղուան գետի վերին հոսանքում (ձախափնյա մասը), որը, ըստ երևույթին, լ փ ի ն ն երի անունով կոչվել է Табань (տե՛ս Книга Большому Чертежу, М.—П., 1826, էջ 39):

¹⁰² P A: Խեղայք թերևս լինի «Խ ե ղ ա կ ի» — Χεгаки ցեղանունը՝ Անասյայի շուրջը բնակվող աղբղական ցեղը, որի այլ անունն էր «Ն ա տ ու խ ա յ»: Սակայն այս եզրակացությանը հակասում է «Խեղայք»-ի տեղագրումը դաղստանյան ցեղերի շարքում:

¹⁰³ P A: Καπνισ (Strabo, XI, 4, 5), երբեմնի խոշոր ցեղ, որը ձուլվել է հարևան ժողովուրդների մեջ: Թողնելով Caspianae Կապրք երկրի անունը, որ համապատասխանում է Աշխ. Փայտակարան նահանգին, իսկ Աշխ. հիշատակվող Կապրք պետք է աննշան ցեղ լիներ Սամուր գետից հարավ ընկած վայրերում:

յորում Շրուան¹⁰⁴ եւ հսրուան¹⁰⁵ աղգ՝ մինչեւ ցնորսվէմ¹⁰⁶, եւ միւս բաղուկն արձակէ նախ վտակ մի ղԱրմ գետ¹⁰⁷ որ [գնայ] դէպ ուղիղ ի հիւսիսի՝ յԱթլ գետ¹⁰⁸,

Եւ ապա նոյն բաղուկն գնայ ղելիւք հիւսիսոյ, յորում բնակեալ են՝ Թաւասպար¹⁰⁹, Հեճմատակ¹¹⁰, Իժմախ¹¹¹, Փասխ¹¹², Փուսխ¹¹³, Փիւքանակ¹¹⁴,

104 Շրուան S, Շրուանք PA: Հնագույն շրջանում Շրուան էր կոչվում Շաբրան-չայի և Գիլ-գիլ-չայի միջև գտնվող երկրամասը, որը Պտղոմեոսի մոտ կոչվում է Σαποδρῆναι (7, 8, 13), որ առաջ է եկել իրանական «Շապոթրան»-ից (Կիրակոս Գանձակեցու մոտ «Շապուրան») և Շրուան երկրի մայրաքաղաքի (այժմ Շաբրան գյուղ) անունով էր կոչվում: VI դարում այստեղ հայտնի էր առանձին ֆեոդալական իշխանություն, որի տիրակալը կրում էր «Շարվանշահ» տիտղոսը: Այս իշխանությունը, հավանաբար, Մազքթաց Արշակունիների թագավորության վերացումից հետո (շուրջ 510 թ.) նվաճվեց Շամախու տիրակալների կողմից և X դ. Շիրվան էր կոչվում ընդարձակ տերիտորիա՝ Շիրվանշահների թագավորությունը (С. Т. Еремян, Σαποδρῆναι Πτολεμαεя в связи с историей скифского царства прикаспийского побережья, Сборник „Вопросы истории народов Кавказа“, Тбилиси, 1966, էջ 76—79):

105 հսրուան S, հարանք PA: հսրուանը կոչվում էր նաև հոլրսան կամ հայ-զան—այսպես էր կոչվում Գիլ-գիլ-չայ և Սումգայիթ գետերի միջև գտնվող տերիտորիան: VI դարից հայտնի էր իբրև առանձին ֆեոդալական իշխանություն, որի տիրակալը կրում էր «հոլրսան-շահ» տիտղոսը: Կենտրոնը պիտի գտնվեր հայզան ամրոցում: Հստ երեվելովին, այս ամրոցի անունը կապվում է հայզանդուրք (սխալ ընթերցումն է հայլանդուրք) ցեղանվան հետ, որը բնակվում էր այս տեղերում: հսրուանի իշխանությունը ևս պիտի առաջ գար 510 թ. հետո:

106 S. արաբ. հուրսանի պատվար (այժմ՝ Բեշ-Խարմաք լեռ)—այսպես էր կոչվում այն պարիսպը, որը կառուցվել էր Գիլ-գիլ-չայի ձախ ափին և բաժանում էր Շաբրուան ազգագավառը հսրուանից:

107 Տե՛ս ծան. 77:

108 Աթլ գետ—նույն Ռա (այժմ՝ Վոլգա) գետն է, տե՛ս ծան. 52:

109 SP, Թաւասպարոտք A: Թաւասպարք ժողովուրդ, Թաւասպարան երկիր և ամրոց (եղիշէ, 2 եղանակ)—այսպես էր կոչվում այժմյան թաւասարանցիների տերիտորիան: Թաւասարանցիների լեզուն պատկանում է Կովկասյան լեզվախմբի լեզգիական խմբին: Թաւասպարները—թաւասարանցիները բնակվում են Դերբենդից արևմուտք, Կուրա՝ գետի ավազանում:

110 Հեճմատակ SP: Ենթադրաբար տեղադրում ենք Սամուր գետից հարավ. հաճմադից ալանուտք—արարական աղբ. «հասմանդանը»: (Տե՛ս М. И. Артамонов, էջ 58):

111 SA Իժմախք P: Թերևս արաբ. աղբ. «Շանդան» և այժմյան ակուշա ժողովուրդը պիտի լինի (С. Т. Еремян, Расселение..., էջ 406):

112 SP, Փասխ A:

113 Քուսխ A: Փուխք PA. Փասխք SP և Փուսխք SP (Փոխք—ըստ Փալստոսի) միևնույն ցեղանվան տարբեր ձևերն են: Այժմ՝ մահիստուիները, այսինքն շեշենների երկրից Դիրիբիլևի Այաղանի գետի ակունքների շրջանում բնակություն հաստատած շեշենական ցեղը, նույն Փասխ||Փուսխ տերմինի տարատեսակը Փխիկ (հոգն. Փխիյ) ձևով գործածում է հեռուր նշանակությամբ: Հին վրացական աղբյուրներում նույն ցեղանունը ფხოვი Փխովի, ფხოვლი ფხოვლი Փխովի ձևով երևան է դալիս, ամենայն հավանականությամբ, ոչ միայն փշավենի, այլ նաև հեռուր նշանակությամբ, որի մասին ուղղակի ցուցում կա Վախուշտիի մոտ: «Քարթլիս ցխովրերայի» («Պատմություն վրաց») հայերեն համառոտ թարգմանության մեջ (XII դարի) ավանդված է Փխայք ձևը (տե՛ս Н. Марр, Кавказские племенные названия и местные параллели, էջ 3, 4, 6):

114 Փիւքանակ S, Թիլոնայք P, Փոքոնակ A: Փիւքուան (եղիշէ, Դ եղանակ): Սովորաբար համարում են պեշենեզ ցեղանվան տարբերակ, որ համոզիչ չէ և դժվար է որոշ եզրակացության գալ այլ փաստեր շունենալու պատճառով (տե՛ս Պտեփան Կանայանց, Անհայտ գավառներ Հին Հայաստանի, էջմիածին, 1914, էջ 141, ծան. 2):

Բաղկան¹¹⁵ ուստի առնու պարիսպն երկայն՝ որ կոչի Ապղուտ-կաւատ¹¹⁶ [եւ ձգի] մինչեւ ցԱղմինոն մաւրս¹¹⁷ եւ ցծով։ Որոյ ըստ հիւսիսոյ՝ Մասքութան աղզն¹¹⁸ բնակեալն են, ի վարդանեան դաշտին¹¹⁹, մինչեւ ցԿասբից ծովն, յոր բաղուն կաւկասայ հպի. յորմէ ածեալ է պարիսպն Դարբանդայ¹²⁰, այսինքն Կապ եւ Դուռն՝ քաղաք պահակին Ճորայ¹²¹, աշտարակ ահագին ի ներքս ի ծովուն կառուցեալ։

115 Բազանք S, Բաքանք PA, սիշտ ձեր պիտի լինի Բաղկան։ Այս անունը որոշվում է շնորհիվ Աղվանքի գավառներից մեկի՝ Դաշտ ի Բաղկանի A, որ հետագա Շիրվանի դաշտումն է տեղագրվում։ Բաղկանը համապատասխանում է Զաքարիա Հոնետորի Bazgun երկրին և տեղագրվում է Ափշերոնի թերակղզուց մինչև Շամախի քաղաքը և Աղ-սու գետը ընկած տարածությունը։ VI դարից (510 թ.) հայտնի էր իբրև առանձին ֆեոդալական իշխանություն, որի կենտրոնը Շամախի քաղաքն էր։ Բացառված չէ, որ Աշխ. սկզբնական բնագրում գոյություն ունենա «Բաղկան Հարանդ գաւառաւ և Շամախի քաղաքաւ»։ Այս Հաբանգը չպետք է շփոթել Սյունիքի և Արցախի նույնանուն գավառների հետ։ Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ Աշխ., էջ 42—43։ Բաղկանը հիշատակված է «Քաաբա-ի-Զարդուշտ» եռալեզվյան արձանագրության հունարեն վարկածում Μαχελωνια ον վան տակ (տե՛ս С. Т. Еремян, Страна «Махелония», էջ 47—58)։ Դաշտ-ի-Բաղկանը Դարգարացուց դաշտի մասն էր և այստեղ ևս հունական առասպելաբանությունը՝ լեդելի (լեկք) և գելերի (Գեղաու գաւառ) միջև բնակեցնում է ամազոնուհիներին (Strabo, VII, 3, 21, XI, 15, 1), որ գարգարացիների այլաբանական անունն է (տե՛ս ծան. 51)։

116 Տ։ Այն պարիսպն է, որ գտնվում էր Վել-վելի-չայ և Շաբրան-չայ գետերի միջև։ Այս պարիսպը սկսվում էր Կովկասյան լեռնաշղթայից և անցնում էր Շասյորան քաղաքից հյուսիս՝ մինչև Կասպից ծովը։ Ըստ երևույթին, կառուցվել է Սասանյան կալատ (488—496, 498—531) արքայից արքայի ժամանակ (տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ Աշխ., էջ 37)։

117 Տ։ Այսպես էր կոչվում այժմյան Աղ-զիբի լիմանը (տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ Աշխ., էջ 32)։

118 Տ։ Մասքութ PA։ Արաբ. Մասքաթ, հետագայում Մուսկուր, Մուշկուր. այդպես էր կոչվում Չոդա երկրի ծովեզրյա մասը, որ Մաղթթաց Արշակունիների թագավորության կենտրոնական երկրամասն էր։ Մաղթութները պատկանում էին սկյութա-սարմատական-իրանական ցեղերի խմբին։ Նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սրանք նույն ալաններն են, որոնց Աղվանքին սահմանակից վայրերում գտնվելու պատճառով աղբյուրներում շփոթության են ենթարկվում միանման «աղան, աղուան, ալան, ալուան» անունները։ Մասքութ-ալանների թագավորական դինաստիան ծագում էր ապառն-ապառհացի ցեղից (որի մի մասը բնակություն էր հաստատել Կուրի գետաբերանի շրջակայքում) և իրեն համարում էր Արշակունի։ 338 թ. հետո Մասքթաց Արշակունիները տիրեցին Փայտակարան քաղաքին (տե՛ս ծան. 51), սակայն Անդրկովկասում Սասանյան Իրանի գերիշխանության հաստատումից հետո, 462 թ. Վաչե Բ թագավորը թողնում է իր կողմից հիմնված Պարտավ քաղաքը և իր արքունիքով վերադառնում նախնիների Չոդա երկիրը, որտեղ տարածվում է քրիստոնեությունը։ Այստեղ կենտրոն է դառնում Չոդ քաղաքը (հետագայում Զասար-Սամուր), որը Սասանյանների աշխարհակալության սահմաններից դուրս էր, սակայն, խոսքով Ա Անուշիրվանը (531—572) նվաճեց մինչև Դարբանդի անցքը և վերացրեց Մաղթթաց Արշակունիների դինաստիան (չուրջ 510 թ.)։

119 Տ։ Աշխ. հեղինակը, ծանոթ լինելով Գրիգորիսի վարքին, ցույց է տալիս նրա նահատակության տեղը Վարդանեան դաշտը, որ իրականում գտնվում էր Վարդանակերտ քաղաքի շրջակայքում, Երասխի աջ ափին, իսկ Մաղթթաց աշխարհում գտնվում էր Վարդան անունով երկիրը, որը նույն Մասքաթը պիտի լինի (տե՛ս В. Ф. Минорский, նշվ. աշխ., էջ 114—115)։

120 SPA։ Նկատի ունի խոսքով Ա Անուշիրվանի (531—579) կողմից կառուցված Դարբանդի պարիսպները, որ վերջանում էին ծովափին Դարբանդ քաղաքով և ծովում կառուցված պաշտպանական շինություններով։

121 «Քաղաք պահակին Ճորայ» ասելով նկատի ունի նույն Դարբանդ քաղաքը, որը գտնվում էր՝ Ճոր, Չոր, կամ Չոլ, Չոդ անունը կրող երկրի հյուսիսային սահմանագծում։ Դարբանդ քաղաքը և պարիսպը կառուցվել են VI դարի սկզբներին, երբ այս տեղերում հաստատվեց Սասանյան Իրանի գերիշխանությունը, իսկ մինչև այդ Չոդա (Չուլալ, Չորայ, Ճորայ) եռլեռի

Իսկ ի հիւսիսոյ նորսւ թագաւորութիւն Հոնաց¹²² հուսլ ի ծով, եւ ի մտից նորա առ Կաւկասով Վառաշան քաղաք¹²³ նոցին Հոնաց եւ Չունդարս¹²⁴ եւ Սմընդըն¹²⁵,

Եւ յարեւելից բնակեն Սաւիրք¹²⁶ ցթալդ գետ¹²⁷, որ մեկնէ ընդ Ասիական Սարմատք, եւ ընդ Սկիւթիա աշխարհք, որ են Ապախտար¹²⁸, այսինքն Թուրքաստանք¹²⁹, եւ Խաքանն¹³⁰ թագաւոր նոցա [որ է տէր Խազրաց], եւ Խաթունն¹³¹ Դշխոյ՝ նոցա [թագուհի], կին Խաքանայ ի Բասլաց ազգէն¹³²:

Կենտրոնը հոմանուն քաղաքն էր, որը Մազրթաց Արշակունիների մայրաքաղաքն էր (շուրջ 462—510 թթ.) և տեղադրվում է Սամուր գետի դելտայի շրջանում, այժմյան Բիլիջի երկաթուղային կայարանից ոչ հեռու գտնվող Թոփրադ-կալէի ավերակների տեղում, արաբական հեղինակների Ջասար-Սամուրը:

122 Գրավում էր Կասպից ծովի ափերը Դերբենդից հյուսիս V—VI դարերում: Սրանց մայրաքաղաքն էր Վառաշանը, այժմյան Բույնակսկի մոտ գտնվող Կաֆիր-Կումուխ վայրում (Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ Աշխ., էջ 82: Տե՛ս նաև՝ Մ. II. Артамонов, էջ 186):

123 Տե՛ս ծան. 122:

124 Ըստ երևույթին հետագա էնդերի, այժմ՝ Անդրեյ աուլ գյուղը (Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ Աշխ., էջ 76):

125 ՄՍՀՆԴԻ Տ, պիտի լինի՝ ՄՍՀՆԴԻ, տեղադրվում է Թերեք գետի վրա, այժմյան Ղզլարի մոտերքը (Մ. II. Артамонов, էջ 393, 398, 399): Սմընդըն խաղիւների հին մայրաքաղաքն էր:

126 Սավիրները VI դարի սկզբներին Արևմտյան Սիբիրի և Վոլգայի կողմից գալով, վանեցին իրենց ցեղակից հոններին, գրավելով նրանց տեղը (Մ. II. Артамонов, էջ 64—78):

127 Նույն Ավլ-Վուգա գետն է:

128 Պա՛հ. araxtar աշխարհում է «հիսիս» և համապատասխանում է հուն. Ὀρεβορσας-ին:

129 Թուրքաստանք էր կոչվում այժմյան Ղազախստանի հյուսիսային մասը և «Սկութիա աշխարհք, որ են Ապախտարք, այսինքն Թուրքաստանք» գործածված է հյուսիսային երկրներ նշանակությամբ, որտեղ այդ ժամանակները (VI—VII դդ.) գոյություն ունեւր Արևմտա-թուրքական խաքանությունը (տես Մ. II. Гумилев, Древние тюрки, М., 1967, էջ 26 և հտ.):

130 Խաղիւների թագավորի ժառանգական տիտղոսն է: «Խաքան» բառը պահպանվեցնում, պարսկերենում, ապա հայերենում փոխառություն է թուրքական լեզվից, որտեղ «խաքան» նշանակում է՝ «կայսր, թագաւոր, Չինաստանի թագաւոր» (Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. III, էջ 451):

131 Հայերենում «խաթուն» բառը ունեւր հատուկ նշանակություն, նշանակում էր «թագուհի խազրաց»: Խաղիւների և առհասարակ թուրքական լեզուներում այս բառը փոխառություն է սոգդերենից, որտեղ «խուտայնա» կամ «խուտենի» նշանակում է «թագուհի», որ «խուտաւ», «թագաւոր» բառի իգականն է (տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 313):

132 Բնագրից կարելի է հետեւեցնել, որ բասիլների ցեղից է եղել խաղիւների «խաթունը» — թագուհին, որ առանձնահատուկ տեղ է գրավել խաղիւրական արքունիքում, պահպանելով մայրիշխանության բազմաթիւ վերապրուկներ, որոնք դալիս են հնագույն ժամանակներից (տե՛ս ծան. 43, տե՛ս նաև Բ. Граков, Пережитки матриархата у сарматов, ВДИ, 1947 № 3, էջ 101—121):

(Շարունակելի)